

մէջ. 1845ին կը մեկնի Էօտէմիշ և Չուլֆայեան զպրոցին ուսուցիչ կը կարգուի: Կիրակոս պարք. 1849ին Ս. Յակոբ կը հրաւիրէ զինքը ուսուցչութեան համար և յետոյ իրեն կը յանձնէ նաև տպարանի տեսչութիւնը, և 1850 ին ալ կ'ստանձնէ պատրիարքարանի ֆարսղարարիւնը: Սաւալան իր թոշակին անբաւականութեան պատճառով կը թողու վանքը և կը վերադառնայ 1850 Մայիսին Իզմիր, ուր ժամանակ մը ուսուցչութեամբ պարապելէ յետոյ՝ դարձեալ 1863ին Ս. Յակոբ կը հրաւիրուի իր նախկին պաշտօնները վարելու համար. ժամանակ մը կը պաշտօնավարէ, բայց վանքին պարտուց ծանրութեան պատճառով կը հրաժարի եւ կը մեկնի Ադեքսանդրիա ուսուցչութեան պաշտօնով եւ կը մնայ հոն հինգ տարի, վերջը կը դառնայ Զմիւռնիա և 1878ին կ'ստանձնէ Արշաղոյս Արարեսեանի խմբագրութիւնը, բայց նիւթական պատճառներով քիչ ժամանակէն կը թողու այդ գործը, և դարձեալ ուսուցչութեան պաշտօն կը վարէ այլեւայլ տեղեր. կը վախճանի Իզմիրի մէջ 1901 Յունվար 17 ին:

Սաւալանի գրական երկասիրութիւններն են.

— Աշխարհաբար թարգմանութիւն Շաթոպրիանի Աքալան, որ 1842 ին հրատարակուած է եւ Թրիէստ գտնուող Պետրոս Եօսուֆեանի անուան նուիրուած:

— Ս. Աթոռի տպարանէն իր հակողութեան և խնամոյ տակ հրատարակուած են Իսահակ վրդ.ի Յովսէփի գեղեցիկ անուն բարոյական մէկ վէպը, Բերգումեան Պետրոս վրդ.ի Մեկնութիւն Եփեսացոյցը, Սամուէլ Բարբիի Գործ Ոսկեղիմիկը, Երեւանցի Զաքարիա Սոճենցի Կսակագիր հոգեշահ քանից գիրքը եւ Ղեքունայ Եղեսացոյ, Մասքոս Ուռնայեցոյ և Միխայելի Ասուրոյ Պատմութիւնները:

— Կը վարէ Սիօնի խմբագրութիւնը (1866—68).

— Կը կազմէ Ս. Յակոբի վանքին ձեռագիրներու չուցակը, հասցնելով մինչև 1700 թիւը.

— Ս. Աթոռոյ տպարանէն իր հրատարակած թարգմանութիւններն են, Մեհսոբ մանկանց և Դիսուրիւն վԱսուճոյ գիրքերը. իսկ իր այլեւայլ թարգմանութիւնները կը մնան անտիպ:

— Իր գլուխ գործոցը կարելի է նկատել ընդարձակ Երուսաղեմի Պատմութիւնը գրաբար գրուած, որ աշխարհաբարի վերածուելով հրատարակուելու վրայ է Ս. Աթոռի տպարանէն: